Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Շինուհայրի միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (տղաների խմբի,8դասաժամ),աշխարհագրության (23դասաժամ), ադրբեջաներենի (8դասաժամ),ֆիզկուլտուրայի (40 դասաժամ),երաժշտության (9դասաժամ), ինֆորմատիկայի (14դասաժամ)ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (ձև 1),
-1լուսանկար 3x4չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին»ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 26-ից** մինչև **նոյեմբերի 8-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի և չաշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. Նոյեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին**, Շինուհայրի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ

Սյունիքի մարզ, Տաթև համայնք, գ. Շինուհայր, մայրուզի, փակուղի 6: Տեղեկությունների համար զանգահարել 093 35 44 71 հեռախոսահամարով: